ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Գյումրի, +374 312 3-2606, gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 փետրվարի 2026 թվականի N 22-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 7-րդ հոդվածի 8-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 33-րդ, 34-րդ, և 35-րդ կետերի պահանջները և որոշման հավելվածում նշված դիմումատուների Գյումրի համայանքի ղեկավարին ուղղված դիմումները՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված և դրանց նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը գրանցված շենք-շինությունները և դրանց պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած հողամասերը ուղղակի վաճառքի միջոցով օտարել տվյալ շինությունները կառուցողներին՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նախաբանում նշված դիմումատուներին պատշաճ կերպով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -28 **Դեմ -0** **Ձեռնպահ -0**

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Վ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Շ. ԱՐԱՄՅԱՆ

Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
Ն. ԲԵԳԶԱԴՅԱՆ
Ա. ԲԵՅԲՈՒՏՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Կ.ՄԱԼԽԱՍՅԱՆ

2026թ. փետրվարի 10
ք. Գյումրի

Հավելված՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Գյումրի համայնքի ավագանու
2026 թվականի փետրվարի 10-ի
N 22-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ

ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ /ՀՈՂԱՄԱՍԵՐԻ

N	Գույքի գտնվելու վայրը (հասցեն)	Կառուցապատողի անուն ազգանուն	Հողի ծածկագիր	Հողամասի մակրեսը քառ.մ	Հողամասի համար վճարվելիք գումարի չափը	Գույքի մակերեսը քառ.մ	Գույքի համար վճարվելիք գումարի չափը	Շինության գործառնական նշանակությունը	Հողի նպատակային և գործառնական նշանակությունը	Հողի տարած ագնահատման գոտին	Դիմումի համար
1	Հ. Մազմանյան փողոց, № 313/4	Դավիթ Հակոբյան	1027-0547	87,87	600504	42,26 45,61	97874 211266	ավտոտնակ խորդանոց	բնակավայրերի բնակելի կառուցապատման	10	14.02.2024 №2885
2	Սավոյան փողոց, № 9/7	Ալվարդ Խաչատրյան	0309-0007	581,35	470894	396,31	1307823	բնակելի տուն	բնակավայրերի բնակելի կառուցապատման	11 /հին/	29.01.2021 №1587 21.12.2022 №24236
3	Մ. Շչեդրինի փողոց, № 5/26	Վաչագան Հարությունյան	0603-0100	44,4	466822	44,4	120990	ավտոտնակ	բնակավայրերի բնակելի կառուցապատման	9	08.01.2024 №206
4	Ե. Լալայան փողոց, № 2/21	Խանում Դավթյան	0789-0231	370,02	2528716	141,8	985226	բնակելի տուն	բնակավայրերի բնակելի կառուցապատման	10	04.08.2025 №10919
5	Կազաչի պոստ թաղամաս, № 118	Սևակ, Կարապետ և Աիդա Հովհաննիսյաններ	1042-0018	545,6	1575692	162	813078	բնակելի տուն	բնակավայրերի բնակելի կառուցապատման	12	15.09.2023 №19487

6	Մ. Շչեդրինի փողոց, № 1/14	Զելիմ, Լուսիա և Հասմիկ Սուքիասյաններ	0601-0124	72,5	762265	72,5	592687	բնակելի տուն	բնակավայրերի բնակելի կառուցապատման	9	15.01.2024 №624
7	Հ. Ղանդիլյան փողոց, № 4/15	Գայանե Մխիթարյան	1233-0013	9,66	66016	9,66	201353	խանութ	բնակավայրերի հասարակական կառուցապատման	10	04.08.2025 №10979
8	Հ. Ղանդիլյան փողոց, № 4/11	Գայանե Մխիթարյան	1233-0009	12,65	86450	7,85	163625	խանութ	բնակավայրերի հասարակական կառուցապատման	10	04.08.2025 №10979
9	Թբիլիսյան խճ. 5-րդ անցուղի, № 21/2	Արտյոմ Պապոյան	0409-0024	458,6	861251	150,67	642758	բնակելի տուն	բնակավայրերի բնակելի կառուցապատման	13	20.09.2023 №19881
10	Հ. Սարգսյան փողոց, № 35	Սամվել Ալվանջյան	0676-0024	424,3	1884740	185,73	1097107	բնակելի տուն	բնակավայրերի բնակելի կառուցապատման	11	09.09.2025 №13354
11	Վ. Սարգսյան փողոց 1-ին թաղամաս №44/7	Ռուզաննա Գևորգյան	0406-0015	129,1	244450	129,1	557140	բնակելի տուն	բնակավայրերի բնակելի կառուցապատման	13	26.04.2023 №7744
12	Հ. Ղանդիլյան փողոց, № 51/26	Իրինա Մարգարյան	1312-0126	28,7	301751	28,7	78207	ավտոտնակ	բնակավայրերի բնակելի կառուցապատման	9	12.05.2025 №5942

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲԱԺԻՆ

Գ. Գյումրու համայնքապետի պարոն
Ս. Բալասանյանին
Գայանե Միքայելյանից
Հեռ. 094744491

Դիմում

Ք. Գյումրի Շահումյան 4/2 շենքի հասցեն մեր սեփական շենքն է և այդ հասցեում ունեմ ապօրինի կառույց: Խնդրում եմ քննարկել օրինականացման հարցը մեր սեփականությունը: Կից ներկայացնում եմ փաստաթղթերը, որ հաստատում եմ:

Դիմող՝ [signature] Գ. Միքայելյան

29.01.2021թ.

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐԻ» ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
Քարտուղարության բաժին
ՄՏԱՑՎԱԾ Է 29 01 2021
ԳՐԱՆՑՎԱԾ Է N 1556

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՎԴ5/0513/05/23

Վ Ճ Ի Ռ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

«4» հոկտեմբեր 2024թ. ք. Գյումրի

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը (այսուհետ նաև Դատարան)՝

նախագահությամբ՝ **Տիգրան Սանթրոսյանի,**

քարտուղարությամբ՝ **Ա. Թորոսյանի,**

մասնակցությամբ՝ հայցվոր **Գայանե Մխիթարյանի** (անձնագիր թիվ AL0600874, տրված 29.01.2024 թվականին, 064-ի կողմից),

հայցվորի ներկայացուցիչ **Տիգրան Գրիգորյանի** (նույնականացման քարտ թիվ 012216560, տրված 24.07.2020 թվականին, 006-ի կողմից, լիազորագիր տրված 09.02.2024 թվականին, 3 տարի ժամկետով)

դռնբաց դատական նիստում քննելով վարչական գործն ըստ հայցի Գայանե Մխիթարյանի ընդդեմ Գյումրու համայնքապետարանի՝ ՀՀ, Գյումրի ք., Ղանդիլյան փ., թիվ 4/2 բնակելի տանը կից տարածքում կառուցված ինքնակամ շինությունը ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշմամբ սահմանված կարգով օրինականացնելու վերաբերյալ փաստաթուղթը տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասին

Պ Ա Ր Զ Ե Ց.

Գործի դատավարական նախապատմությունը.

Գայանե Մխիթարյանը հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ Գյումրու համայնքապետարանի՝ ՀՀ, Գյումրի ք., Ղանդիլյան փ., թիվ 4/2 բնակելի տանը կից տարածքում կառուցված ինքնակամ շինությունը ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշմամբ սահմանված կարգով օրինականացնելու վերաբերյալ փաստաթուղթը տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասին:

30.11.2023 թվականին հայցադիմումը մակագրվել է դատավոր Տիգրան Սանթրոսյանին:

Դատարանի 06.12.2023 թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ և պատասխանող վարչական մարմնից պահանջվել է ապացույց:

Նշված գործով հրավիրվել է նախնական դատական նիստ՝ 15.02.2023 թվականին:

14.02.2024 թվականին տրվել է կատարողական թերթ:

Վարչական վարույթի նյութերը Դատարան են մուտքագրվել 06.03.2024 թվականին:

Նախնական դատական նիստը հետաձգվել և նշանակվել է 25.04.2024 թվականին:

08.05.2024 թվականին հայցվոր կողմը ներկայացրել է հայցի առարկան հստակեցնելու վերաբերյալ դիմում:

Նախնական դատական նիստը տեղափոխվել և նշանակվել է 23.08.2024 թվականին:

Դատարանի 23.08.2024 թվականի որոշմամբ վարչական գործը նշանակվել է դատաքննության՝ 2024 թվականի սեպտեմբերի 13-ին:

Դատական նիստի մասին պատշաճ ծանուցված պատասխանող կողմը չի ներկայացել: Դատարանը, ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածով, գործի դատաքննությունն իրականացրել է կողմի բացակայությամբ:

Գործի դատաքննությունն իրականացվել և ավարտվել է 13.09.2024 թվականին: Գործն ըստ էության լուծող դատական ակտի հրապարակման ժամանակ է հայտարարվել 2024 թվականի հոկտեմբերի 4-ը:

Կողմերի իրավական դիրքորոշումները

Հայցվորը ներկայացված հայցադիմումով պնդել է, որ ՀՀ, Գյումրի ք., Ղանդիլյան փ., թիվ 4/2 բնակելի տանը կից տարածքում կառուցված ինքնակամ շինությունը ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշմամբ սահմանված կարգով օրինականացնելու վերաբերյալ բազմաթիվ դիմումներ է ներկայացրել, սակայն պատասխանող վարչական մարմնի կողմից դրսևորվել է անգործություն: Վկայակոչելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 31-րդ, 48-րդ, 62-րդ հոդվածները, նշել է, որ բացակայում է ֆիկտիվ վարչական ակտի առոչնչության հիմքը, ուստի ֆիկտիվ վարչական ակտը պետք է համարվի ընդունված:

Հայցվորը նաև դիմում է ներկայացրել ֆիկտիվ վարչական ակտը տրամադրելու խնդրանքով, սակայն նշված ակտը չի տրամադրվել:

Պատասխանողը հայցադիմումի պատասխան չի ներկայացրել:

Դատարանի վերլուծությունը.

Դատարանն արձանագրում է, որ հայցվորի կողմից ներկայացվել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված գործողությունների կատարման հայց՝ ՀՀ, Գյումրի ք., Ղանդիլյան փ., թիվ 4/2 բնակելի տանը կից տարածքում կառուցված ինքնակամ շինությունը ՀՀ կառավարության

18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշմամբ սահմանված կարգով օրինականացնելու վերաբերյալ որոշումը տրամադրելու պահանջով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործողության կատարման հայցով հայցվորը կարող է պահանջել նաև օրենքով սահմանված ժամկետում վարչական ակտ չընդունվելու հետևանքով վարչական ակտն ընդունված համարվելու դեպքում տրամադրել օրենքով նախատեսված համապատասխան փաստաթուղթը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի համաձայն.

«1. Վարչական վարույթ հարուցելու հիմքերն են՝

ա) անձի դիմումը, բողոքը.

բ) վարչական մարմնի նախաձեռնությունը:

2. Սույն հոդվածի 1-ին մասի «ա» կետով նախատեսված դեպքերում վարչական վարույթը համարվում է հարուցված՝ համապատասխան դիմումը կամ բողոքը վարչական մարմնում ստանալու օրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ դիմումը կամ բողոքը, սույն օրենքի 33-րդ հոդվածի համաձայն, վերահասցեագրվել է ըստ իրավասու վարչական մարմինների կամ վերադարձվել է դիմողին (բողոք բերողին):

(...)»:

Նույն օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի առավելագույն ժամկետը 30 օր է: Օրենքով կարող են սահմանվել հատուկ՝ 30 օրից կարճ կամ ավելի երկար ժամկետներ:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական վարույթի ժամկետն սկսվում է դիմումը տվյալ վարչական մարմնում մուտքագրելու օրվանից, իսկ վարչական մարմնի նախաձեռնությամբ ընդունվելիք վարչական ակտերի համար՝ նախաձեռնության օրվանից:

Նույն օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե վարչական ակտ ընդունելու իրավասություն ունեցող վարչական մարմինը սույն օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի «ա», «դ» և «ե» կետերի պահանջների պահպանմամբ ներկայացված դիմումի հիման վրա հարուցված վարույթի արդյունքում օրենքով սահմանված ժամկետում որևէ որոշում չի կայացնում, ապա վարչական ակտը համարվում է ընդունված, և դիմողը կարող է ձեռնամուխ լինել համապատասխան իրավունքի իրականացմանը, բացառությամբ նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական ակտը չի կարող ընդունված համարվել, եթե դա նույն օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետի համաձայն առ ոչինչ է:

Նույն օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետի համաձայն՝ առ ոչինչ է այն վարչական ակտը, որում առկա են, մասնավորապես՝ հետևյալ ակնառու կոպիտ սխալը՝ ակտով դրա հասցեատիրոջ վրա դրվում է ակնհայտ ոչ իրավաչափ պարտականություն, կամ նրան տրամադրվում է ակնհայտ ոչ իրավաչափ իրավունք:

Վերոգրյալ նորմերի վերլուծությունից հետևում է, որ անձի դիմումը հանդիսանում է վարչական վարույթ հարուցելու հիմք, որպիսի դեպքում վարչական վարույթը համարվում է հարուցված համապատասխան դիմումը վարչական մարմնում ստանալու օրվանից: Վարչական վարույթի առավելագույն ժամկետը 30 օր է, որպիսի վարչական վարույթի ժամկետը սկսվում է դիմումը տվյալ վարչական մարմնում մուտքագրելու օրվանից: Միաժամանակ ներկայացված դիմումի հիման վրա հարուցված վարույթի

արդյունքում օրենքով սահմանված ժամկետում վարչական մարմնի կողմից որևէ որոշում չկայացվելու դեպքում վարչական ակտը համարվում է ընդունված, և դիմողը կարող է ձեռնամուխ լինել համապատասխան իրավունքի իրականացմանը, բացառությամբ այն դեպքի, երբ նախատեսված վարչական ակտով տրամադրվում է ակնհայտ ոչ իրավաչափ իրավունք:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված գործողության կատարման հայցով հայցվորը կարող է պահանջել օրենքով սահմանված ժամկետում վարչական ակտ չընդունվելու հետևանքով վարչական ակտն ընդունված համարվելու դեպքում տրամադրել օրենքով նախատեսված համապատասխան փաստաթուղթը:

Դատարանի գնահատմամբ անձին տրամադրվող իրավունքը կարող է ակնհայտ ոչ իրավաչափ համարվել այն դեպքում, երբ այդ հանգամանքը տեսանելի է առանց վարչական ակտի կայացման փաստական և իրավական հիմքերը ստուգելու և վարչական ակտի բովանդակությունն ինքնին դրա ոչ իրավաչափ լինելու վերաբերյալ միանշանակ եզրահանգում է ձևավորում: Այսինքն՝ անձին տրամադրվող իրավունքը պարտադիր կերպով պետք է լինի ակնհայտ ոչ իրավաչափ: Հետևաբար՝ վարչական ակտով անձին «ոչ իրավաչափ իրավունք» տրամադրելը դեռևս բավարար չէ վարչական ակտն առ ոչինչ դիտելու համար, վարչական ակտի առ ոչինչ լինելը հաստատված համարելու համար անհրաժեշտ է, որ դրանով տրամադրված իրավունքը առերևույթ ոչ իրավաչափ լինի, ուստի այն դեպքերում, երբ վարչական ակտի իրավաչափությունը գնահատելու համար առաջանում է դրա կայացման փաստական և իրավական հիմքերը ստուգելու անհրաժեշտություն, ապա դա արդեն իսկ նշանակում է, որ տվյալ վարչական ակտ առ ոչինչ չէ:

ՀՀ վճռաբեկ դատարանը արտահայտել է իրավական դիրքորոշում այն մասին, որ քննարկվող իրավական կառուցակարգը բխում է յուրաքանչյուրի՝ վարչական մարմինների կողմից իրեն առնչվող գործերի ողջամիտ ժամկետում քննության իրավունքի՝ որպես 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված մարդու պատշաճ վարչարարության հիմնարար իրավունքի բաղադրատարրերից մեկի պաշտպանության անհրաժեշտությունից: Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենքով սահմանված ժամկետում վարչական ակտ չընդունվելու հետևանքով վարչական ակտն ընդունված համարվելու հետ կապված ընդհանուր իրավակարգավորումներն օրենսդիրը սահմանել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածով, որը նախատեսում է վարչական մարմնի կողմից չընդունված վարչական ակտի՝ օրենքի ուժով ընդունված համարվելու իրավական հնարավորություն: Այսինքն՝ վարչական մարմնի կողմից չընդունված վարչական ակտը նշված իրավադրույթի ուժով որոշ դեպքերում կարող է համարվել ընդունված և առաջացնել այդ վարչական ակտին բնորոշ բոլոր իրավաբանական հետևանքները: Տվյալ դեպքում դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի արդյունքում վարչական ակտի ընդունման օրենքով սահմանված ժամկետը խախտվելու և օրենքով նախատեսված որոշակի պայմանների առկայության դեպքում գործում է այն ֆիկցիան, որ պահանջվող բարենպաստ վարչական ակտը համարվում է ընդունված, և դիմողը կարող է օգտվել դիմում ներկայացնելիս իր ակնկալած իրավունքից, որը տրամադրման էր ենթակա ընդունվելիք վարչական ակտով (տես՝ թիվ ՎԴ/0528/05/16 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 25.04.2017 թվականի որոշումը):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ հայցվող վարչական ակտի իրավաչափությունը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածով սահմանված իրավաբանական ֆիկցիայի գործողության պայման չէ: Նշվածից բացառություն է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետով նախատեսված վարչական ակտի առոչնչության հիմքի առկայությունը, այն է՝ ակտով դրա հասցեատիրոջը տրամադրվում է ակնհայտ ոչ իրավաչափ իրավունք: Այսինքն՝ օրենքով սահմանված ժամկետում վարչական մարմնի կողմից չընդունված վարչական ակտի՝ օրենքի ուժով ընդունված համարվելու ֆիկցիայի գործողությունը պարզելիս դատական վերահսկողությունը սահմանափակվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետով նախատեսված վարչական ակտի առոչնչության հիմքի առկայությունը (բացակայությունը) գնահատելով: Ինչ վերաբերում է հայցվող վարչական ակտի հնարավոր անվավերության հիմքերին, ինչպես նաև հնարավոր առոչնչության մյուս հիմքերին, ապա քննարկվող իրավաբանական ֆիկցիայի գործողությունը պարզելիս դրանց առկայությունը (բացակայությունը) պետք է ենթակա չլինի դատարանի կողմից գնահատման:

Միևնույն ժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է այն հարցին, թե ինչ պահանջների պետք է համապատասխանի վարչական մարմնին ներկայացվող դիմումն և արձանագրել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածով նախատեսված՝ օրենքի ուժով վարչական ակտի ընդունված համարվելու իրավական կառուցակարգը գործում է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում. 1) անձը դիմել է վարչական մարմնին՝ հայցելով որոշակի բարենպաստ վարչական ակտի ընդունում, այսինքն՝ վարչական վարույթը հարուցվել է անձի դիմումի հիման վրա, և դիմումը համապատասխանում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի «ա», «դ» և «ե» կետերի պահանջներին, 2) բացակայում է վարչական ակտի՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետով նախատեսված առոչնչության հիմքը, 3) տվյալ վարչական ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթն իրականացնող վարչական մարմինն օժտված է այդ վարչական ակտն ընդունելու իրավասությամբ, 4) վարչական վարույթն իրականացնող վարչական մարմինն օրենքով սահմանված ժամկետում ցուցաբերել է անգործություն՝ չի ընդունել հայցվող բարենպաստ վարչական ակտը կամ չի կայացրել անձի դիմումը մերժելու մասին որոշում կամ վարչական վարույթը եզրափակող օրենքով նախատեսված որևէ այլ անհատական իրավական ակտ (տես՝ թիվ ՎԴ/9652/05/16 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2021 թվականի որոշումը):

Ասվածի համատեքստում Դատարանն արձանագրում է, որ վարչական ակտն առոչինչ կարող է ճանաչվել, ի թիվս այլնի, այն պարագայում, երբ ակտով դրա հասցեատիրոջ վրա դրվում է ակնհայտ ոչ իրավաչափ պարտականություն, կամ նրան տրամադրվում է ակնհայտ ոչ իրավաչափ իրավունք: Ընդ որում, առոչնչության այդ հիմքը պետք է լինի ակնհայտ և բխի անմիջապես վիճարկվող վարչական ակտից: Իսկ բոլոր այն դեպքերում, երբ առաջանում է անհրաժեշտություն քննության առարկա դարձնելու նաև վիճարկվող վարչական ակտի հիմքում ընկած իրավական կամ փաստական հանգամանքների իսկությունը, ապա վերանում է ակնհայտության

հանգամանքը և ըստ այդմ, վարչական ակտն առ ոչինչ ճանաչելու հնարավորությունը:

Հաջորդիվ, Դատարանն արձանագրում է, որ թիվ ՎԴ/3477/05/13 և թիվ ՎԴ/4009/05/14 վարչական գործերով 26.12.2014 թվականի և 18.03.2015 թվականի որոշումներով, բացահայտելով «ակնհայտություն» եզրույթը, ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ այն իրենից ներկայացնում է անմիջապես աչքի զարնող, առաջին իսկ դիտարկման պահին երևացող, աչքի ընկնող և ոչ մի կերպ չվրիպող ու կասկած չհարուցող ակներևություն:

Դատարանն արձանագրում է, որ հասցեատիրոջ վրա ակնհայտ ոչ իրավաչափ պարտականություն դնելու, կամ նրան ակնհայտ ոչ իրավաչափ իրավունք տրամադրելու հիմքով վարչական ակտը կարող է ճանաչվել առ ոչինիչ, եթե վարչական ակտում առկա ակնառու և կոպիտ սխալները երևում են առաջին իսկ դիտարկմամբ, ոչ մի կերպ չեն վրիպում և կասկած չեն հարուցում: Իսկ բոլոր այն դեպքերում, երբ վիճարկվում է վարչական ակտի հիմքում դրված հանգամանքների հավաստիությունը կամ կիրառված նորմերի սխալ կիրառելիությունը կամ մեկնաբանությունը, ապա նման վարչական ակտը չի կարող դիտվել առ ոչինչ, այլ այն կարող է ճանաչվել անվավեր:

Սույն գործի փաստերի համաձայն.

- 29.01.2021 թվականին Գայանե Մխիթարյանը դիմում է ներկայացրել Գյումրի համայնքի ղեկավարին՝ խնդրելով օրինականացնել ՀՀ, Գյումրի ք., Ղանդիլյան 4/2 տուն հասցեին կից հողամասում կառուցված ինքնակամ կառույցը.
- 05.05.2021 թվականին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, ինչի արդյունքում որոշվել է, որ դիմումը կստանա պատասխան հողմասի չափագրման նյութերը ներկայացնելուց հետո.
- 07.05.2021 թվականին Գյումրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալը հայտնել է, որ դիմումը ընթացք կստանա չափագրման նյութերը ներկայացնելուց հետո.
- 13.10.2021 թվականին ներկայացրած թիվ 18392 դիմումով Գայանե Մխիթարյանը ներկայացրել է չափագրության նյութեր.
- 07.01.2022 թվականին Գյումրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալը հայտնել է, որ դիմումը կքննարկվի վարույթի լսումների ժամանակ.
- 09.02.2022, 10.03.2022, 15.03.2022, 23.03.2022, 23.05.2022, 22.09.2022, 04.04.2023 և 11.07.2023 թվականի դիմումներով Գայանե Մխիթարյանը ներկայացրել է ՀՀ, Գյումրի ք., Ղանդիլյան 4/2 տուն հասցեին կից հողամասում կառուցված ինքնակամ կառույցը օրինականացնելու պահանջ, ինչպես նաև տեղեկատվություն է պահանջել վարչական ակտ չընդունելու վերաբերյալ: Նշված դիմումներին տրվել է պատասխաններ, սակայն Գյումրի համայնքի ղեկավարի կողմից որոշում չի կայացվել.
- 31.10.2023 թվականին Գայանե Մխիթարյանը դիմում է ներկայացրել Գյումրի համայնքի ղեակավարին՝ խնդրելով տարամադրել օրենքի ուժով ընդունված ՀՀ, Գյումրի ք., Ղանդիլյան 4/2 տուն հասցեին կից հողամասում կառուցված ինքնակամ կառույցը օրինական ճանաչելու վերաբերյալ ֆիկտիվ վարչական ակտը: Նշված դիմումին պատասխան չի տրվել:

Դատարանն արձանագրում է, որ «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի համաձայն՝ ինքնակամ

կառույցի օրինականացման հարցի վերաբերյալ որոշում կայացնելու իրավասությունը տրված է համայնքի ղեկավարին:

Սույն դեպքում հայցվորի կողմից ներկայացված դիմումների առնչությամբ Գյումրի համայնքի ղեկավարը որոշում չի կայացրել՝ չի մերժել կամ բավարարել դիմումը, ըստ այդմ՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածով սահմանված վավերպայմանների հաստատման պարագայում ֆիկտիվ վարչական ակտը պետք է համարվի ընդունված:

Հաջորդիվ, Դատարանն արձանագրում է, որ «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշման 2-րդ կետի համաձայն.

«Սահմանել, որ օրինականացման ենթակա չեն այն ինքնակամ կառույցները՝

ա) որոնց պահպանումը խախտում է այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ է սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

բ) որոնք կառուցված են Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված են քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և առաջացնում են հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք»:

Միաժամանակ, անդրադառնալով օրենքի ուժով վարչական ակտի ընդունված համարվելու իրավական կառուցակարգին, Դատարանն արձանագրում է, որ այն գործում է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

1) անձը դիմել է վարչական մարմնին՝ հայցելով որոշակի բարենպաստ վարչական ակտի ընդունում, այսինքն՝ վարչական վարույթը հարուցվել է անձի դիմումի հիման վրա, և դիմումը համապատասխանում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի «ա», «դ» և «ե» կետերի պահանջներին,

2) բացակայում է վարչական ակտի՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետով նախատեսված առոչնչության հիմքը,

3) տվյալ վարչական ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթն իրականացնող վարչական մարմինն օժտված է այդ վարչական ակտն ընդունելու իրավասությամբ,

4) վարչական վարույթն իրականացնող վարչական մարմինն օրենքով սահմանված ժամկետում ցուցաբերել է անգործություն՝ չի ընդունել հայցվող բարենպաստ վարչական ակտը կամ չի կայացրել անձի դիմումը մերժելու մասին որոշում կամ վարչական վարույթը եզրափակող օրենքով նախատեսված որևէ այլ անհատական իրավական ակտ:

Դատարանը փաստում է, որ 1-ին, 3-րդ և 4-րդ կետերով սահմանված վավերապայմանները սույն դեպքում պահապանված են, որպիսի հանգամանքը հաստատվում է վերը հատկորոշված փաստական տվյալներով: Մասնավորապես՝ ինքնակամ կառույցի օրինականացման հարցի լուծումը վերապահված է համայնքի ղեկավարին, իսկ հայցվորն իր դիմումներն ուղղել է համայնքի ղեկավարին, համայնքի ղեկավարը չի կայացրել որևէ որոշում՝ հայցվորի որևէ դիմումին չի պատասխանել համայնքի ղեկավարը, հայցվորի դիմումը համապատասխանում է

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի «ա», «դ» և «ե» կետերի պահանջներին՝ պարունակում է հայցվորի տվյալները, դիմումի ամսաթիվը, ստորագրությունը, դիմումի հասցեատիրոջ տվյալները, կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը:

Անդրադառնալով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետով նախատեսված առոչնչության հիմքին, Դատարանն արձանագրում է, որ հասցեատիրոջը ակնհայտ ոչ իրավաչափ իրավունք տրամադրելու հիմքով վարչական ակտը կարող է համարվել առոչինիչ, եթե վարչական ակտում առկա ակնառու և կոպիտ սխալները երևում են առաջին իսկ դիտարկմամբ, ոչ մի կերպ չեն վրիպում և կասկած չեն հարուցում, իսկ բոլոր այն դեպքերում, երբ վարչական ակտի հիմքում դրված հանգամանքների հավաստիությունը ենթակա է ստուգման՝ ապա նման վարչական ակտը չի կարող դիտվել առոչինչ:

Սույն դեպքում վարչական վարույթի նյութերում առկա են հետևյալ հակասական ապացույցները.

- հայցվորի դիմումներին ի պատասխան պատասխանող վարչակա մարմնի 10.03.2022 թվականի գրությունը, որով նշվել է, որ ինքնակամ կառույցը գտնվում է ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի վրա: Հայցվորի դիմումի հիման վրա տրամադրված Գյումրի քաղաքի գլխավոր հատակագծից քաղվածք, որտեղ պատկերված է Ղանդիլյան փողոցի 4/2 հասցեին կից շինությունը.

- «Մասնագիտական տեղեկանք» տրված քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի գլխավոր մասնագետի կողմից, որի համաձայն՝ ՀՀ, Գյումրի ք., Ղանդիլյան 4/2 տուն հասցեին կից հողամասում կառուցված ինքնակամ կառույցը պահպանելը չի խախտում այլ անանց իրավունքներ, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չէ ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, կառուցված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի վրա, չի գտնվում «Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարանի տարածքում և անշարժ հուշարձանների ցանկում որպես հուշարձան հաշվառված չէ.

- Որակավարում ունեցող մասնագետի կողմից կազմված հողամասի հատակագիծ, որտեղ հողամասի նպատակային նշանակությունը նշված է «Բնակավայրի», իսկ գործառնական նշանակությունը՝ «Բնակելի Կառուցապատման»:

Դատարանը փաստում է, որ նման հակասական ապացույցների և տեղեկությունների պայմաններում չի կարող հաստատվել այն իրողությունը, որ հայցվորին տրամադրվում է ակնհայտ ոչ իրավաչափ իրավունք: Հասցեատիրոջը ակնհայտ ոչ իրավաչափ իրավունք տրամադրելու փաստը կարող է հաստատվել, եթե այդ հանգամանքը երևա առաջին իսկ դիտարկմամբ, ոչ մի կերպ չվրիպի և կասկած չհարուցի, մինչդեռ սույն դեպքում վարչական վարույթի նյութերով չի հաստատվում այն իրողությունը, որ խնդրո առարկա կառույցը գտնվում է ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի վրա: Իսկ նշված հանգամանքի չհաստատվելու պարագայում Դատարանը քննարկման առարկա չի դարձնում այն հարցը, թե արդյո՞ք ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի վրա կառուցված ինքնակամ կառույցը օրինականացնելու վերաբերյալ վարչական ակտը կարող է

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետի համաձայն որակվել առոչինչ վարչական ակտ:

Դատարանը եզրահանգում է, որ սույն վարչական գործով խնդրո առարկա կառույցի՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետի համաձայն առ ոչինչ լինելու հանգամանքը չի հաստատվում: Ավելին՝ «Մասնագիտական տեղեկանք» տրված քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի գլխավոր մասնագետի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ ՀՀ, Գյումրի ք., Ղանդիլյան 4/2 տուն հասցեին կից հողամասում կառուցված ինքնակամ կառույցը պահպանելը չի խախտում այլ անանց իրավունքներ, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չէ ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, չի գտնվում «Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարանի տարածքում և անշարժ հուշարձանների ցանկում որպես հուշարձան հաշվառված չէ:

Վերոգրյալի հիման վրա Դատարանը եզրակացնում է, որ ՀՀ, Գյումրի ք., Ղանդիլյան փ., թիվ 4/2 բնակելի տանը կից տարածքում կառուցված ինքնակամ շինությունը ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշմամբ սահմանված կարգով օրինական լինելու վարաբերյալ վարչական ակտը համարվել է ընդունված, ուստի անհրաժեշտ է պարտավորեցնել պատասխանող վարչական մարմնին տրամադրել համապատասխան փաստաթուղթը: Ընդ որում՝ Օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասով ներկայացված գործողության կատարման հայցը բավարարող դատական ակտը կարող է կատարված համարվել, եթե իրավասու վարչական մարմինը հայցվորին տրամադրում է խնդրո առարկա բարենպաստ վարչական ակտը՝ վարչական վարույթի ժամկետի ավարտին հաջորդող օրվա թվագրմամբ:

Դատական ծախսերի բաշխման հարցը.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի համաձայն.

«(...)

Կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

(...)

3. Եթե պատասխանող է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը կամ պաշտոնատար անձը, ապա դատական ծախսերը դրվում են Հայաստանի Հանրապետության կամ համապատասխան համայնքի վրա, եթե՝

1) պատասխանողի որոշումը, գործողությունը կամ անգործությունը դատարանը ճանաչել է ոչ իրավաչափ.

(...)

10. Ներկայացուցիչների վճարների գծով դատական ծախսի հատուցումը դրվում է համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության կամ համայնքի վրա, եթե գործը լուծվել է ի վնաս իրենց: Հատուցման չափը որոշելիս դատարանը հիմք է ընդունում ծախսերի ողջամիտ չափերը:

(...)»:

Նույն օրենսգրքի 57-րդ հոդվածի համաձայն.

«1. Պետական տուրքի չափի, դրա վճարումից ազատելու, պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու և դրա չափը նվազեցնելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով»:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով դատարաններ տրվող հայցադիմումների, դիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով.

1) վարչական դատարան ներկայացվող հայցադիմումների համար, բացառությամբ սույն մասով սահմանված դեպքերի՝ բազային տուրքի 10-ապատիկի չափով:

(...)»:

Նույն օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ բազային տուրքի չափ է սահմանվում 1000 դրամը:

Տվյալ պարագայում ներկայացվել է մեկ հիմնական պահանջ, որպիսի պարագայում պետական տուրքը կազմում է 10.000 ՀՀ դրամ:

Դատարանն արձանագրում է, որ հայցվորների կողմից վճարվել է 10.000 ՀՀ դրամի չափով պետական տուրք (անդորրագիր թիվ 000048):

Հաշվի առնելով, որ հայցը ենթակա է բավարարման՝ պետական տուրքի մասով դատական ծախսերի վճարման պարտականությունը պետք է կրի պատասխանող կողմը՝ հատուցելով հայցվորի կողմից վճարված 10.000 ՀՀ դրամի չափով պետական տուրքի գումարը:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-126-րդ հոդվածներով Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց.

1. Թիվ ՎԴ5/0513/05/23 վարչական գործով Գայանե Մխիթարյանի հայցն ընդդեմ Գյումրու համայնքապետարանի՝ ՀՀ, Գյումրի ք., Ղանդիլյան փ., թիվ 4/2 բնակելի տանը կից տարածքում կառուցված ինքնակամ շինությունը ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշմամբ սահմանված կարգով օրինականացնելու վերաբերյալ փաստաթուղթը տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասին, բավարարել.

2. պարտավորեցնել Գյումրու համայքապետարանին Գայանե Մխիթարյանին տրամադրել ՀՀ, Գյումրի ք., Ղանդիլյան փ., թիվ 4/2 բնակելի տանը կից տարածքում կառուցված ինքնակամ շինությունը ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ

912-Ն որոշմամբ սահմանված կարգով օրինականացնելու վերաբերյալ փաստաթուղթը.

3. Գյումրու համայնքապետարանից հօգուտ Գայանե Մխիթարյանի բռնագանձել 10.000 ՀՀ դրամը՝ որպես նախապես վճարված պետական տուրքի հատուցման գումար:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո, որի դեմ վերաքննիչ բողոք կարող է ներկայացվել ՀՀ վերաքննիչ վարչական դատարան՝ մինչև դրա օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 12-րդ մասի համաձայն՝ դատական ծախսերի հատուցման վճարումը պետք է կատարվի դատական ծախսերի բաշխման հարցը լուծող դատական արձանագրության օրինական ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան 10 օր հետո, որի չկատարման դեպքում այն ենթակա է կատարման «Դատական արձանագրությունների հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

ԴԱՏԱՎՈՐ ՏԻԳՐԱՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

Վճիռն ուժի մեջ է մտել 05.11.2024թ.